

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

TER-MIKELIAN, Arsak, Dr.—Die armenische Kirche in ihren Beziehungen zur byzantinischen (vom IV bis zum XIII Jahrhundert). Leipzig. Gustav Fock. 1892

ՏԵՐ-ՄԻՔԵԼԵԱՆ, Արշակ դր.—Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդեան ժողովոյ պարագայք (պատմական յառաջադրուիթնւն). Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանի, 1892, գինն է 1 ռ. 50 կոպ. Արժանացած Իզմիրեան Սահակ-Մեսրոպեան մրցանակի:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, պ. Տէր-Միքելեանի երկը լուս է տեսել մի տարի առաջ և արժանացել է մրցանակի. ասեմ, որ նաև գովել է «l'Arménie» լրագրի խմբագրութիւնից, որի խմբագիրը այդ աշխատութիւնը մինչև անգամ պ. Գլադստոնին նւէր ղրկեց, աշխատելով ականաւոր Անգլիացուն հայոց եկեղեցու պատմութեան և դաւանութեան հետ ծանօթացնելու Մենք, իբրև նորն առարկալով պարսպող, բարոյական պարտականութիւն ունէինք, քանի որ մեր կարծիքը պ. Տէր-Միքելեանի աշխատանքի մասին աննպաստ էր, հրապարակ դուրս գալ, բայց միշտ վիշելով երևելի. Բալտոնի խօսքերը ²⁾, լուս էինք, Սակալն

որովհետև պարոն հեղինակը մինչև հիմալ այն խորին համոզմանն է, որ իւր աշխատանքով հայոց եկեղեցական պատմութեան մեծ ծառայութիւն է մատուցել և մինչև անգամ նորն այդ աշխատութիւնը հալերէն է թարգմանել, ստիպած ենք հրապարակ դալ և մեր կարծիքը լալտնել: Ներկալ չօղւածում նախ և առաջ մի քանի սխալների վերալ ու-

հէլլէնօֆիլը չունաց վերջին ապտտամբութեան ժամանակ Յունաստան գնաց, իւր անագին հարստութիւնը ազատութեան գործին էր նւիրում և բարի գործի համար տնխոնջ աշխատում, տեսնելով ցուցերի վատութիւնները, գրում էր իւր հալրենակիցներին. «լոների մասին լալ բան չեմ կարող գրել, վատ բան էլ գրել չէի ցանկանալ»:

²⁾ Նրբ երևելի բանաստեղծն և

շաղրութիւն կը դարձնեմ, որոնց պ. Տէր-Միքէլեանը չպիտի անէր, ապա կը խօսեմ երկի մի քանի մասերի վերայ: Ամբողջի վերայ խօսել անկարելի է, որովհետեւ ամբողջ 1079 տարւալ պատմութիւն է (226—1305):

Ակսնք այն մի քանի սխալներէից, որ, ինչպէս ասացինք, հեղինակը չպիտի անէր: Էջ 72-ում կարդում ենք¹⁾

«Աւստպէս Թէոդորոսը հալածեց Բիւզանդացիներին հիւսիսային Հալաստանից: 660-ին վերջինները կրեցին մի ծանր պարտութիւն և Թէոդորոսը, բիւզանդական մասի իշխանի, Մուշեղ Մամիկոնեանի հետ և Ներսէս կաթողիկոսի հետ միանգամայն հպատակեցաւ արաբացւոյ իշխանութեան: Գորանից լեռոջ նա մեռաւ 651 թւին»:

Առաջին թւականի սասին պարոն հեղինակը մեղ մատնանիշ է անում Ղեոնդ զլ. 4 եր. 13, իսկ երկրորդի մասին Սերէոս 38, 149, Պար. Տէր-Միքէլեանը աստուածաբան է և կարդացել է մեռեալներէ չարութեան մասին, սակայն սրքան էլ ճգնի նա՛ չի կարող մեղ հաւատացնել, որ

¹⁾ Յօդածի հեղինակի առաջ բերած քաղածքներէից մինք պահպանում ենք միայն հայերէնը, մինչդեռ գերմաներէն բնագիրը բաց ենք թողնում: Պ. Յօդածագիրը միայն գերմաներէն լեզուով հրատարակած ի նկատի է ունեցել: Հարկ ենք համարում լայտնել նաև որ Յօդածը տպում ենք մի քանի լապաւումներով, որոնց մէջ նաև մի քանի ալ օրինակներ հեղինակի սխալներէից:

Ման. Խմբ.

660 թւականին բիւզանդացիներին հալածող Թէոդորոսը 651-ին մեռած կարող էր լինել: Թող ինքը համեմատի Ղեոնդը Սերէոսի հետ և իւր կողմ սխալը հասկանալ, մենք զուր ժամանակ չունինք:

Էջ 76 հեղինակը ասում է՝

«Մենք տեսնում ենք, որ մինչև անգամ մի գիտնական աշխարհական (Ջաքարիա Ա.) Շիրակաւանի Սինողից (854 թւին) կաթողիկոս ընտրուեցաւ»:

Մի գիտնական աշխատութեան մէջ սակալն, աղպիսի մի սխալ ամօթալի է: Իրաւ է, որ Ջաքարիա Ա. 854 թւի չալանի Բուղալեան կատարողի ժամանակ կաթողիկոս ընտրուեց, սակալն Շիրակաւանի ժողովը այդ դէպքի հետ ինչ կապ ունի, քանի որ այդ ժողովը Աշոտի իշխանութեան ժամանակ, 861 թւին տեղի ունեցաւ:

Գոքա երևի տառասխալներ են, ինչպէս տառասխալներ են նաև մարթի, մերնել հաճ և այլն: Սակալն անցնենք:

Այժմ վերցնենք պ. Տէր-Միքէլեանի աշխատութիւնից մի գլուխ (գլուխ IV, Բագրատունեաց իշխանութիւնը էջ 75—81)¹⁾ և տեսնենք, թէ պարոն Տէր-Միքէլեանը ինչպէս է մշակել իւր նիւթը: Այդ ամբողջ գլուխը սխալ լերկւորանք է, ուղիղ բան չկալ:

Էջ 75 պ. Տէր Միքէլեանը ալսպէս է սկսում իւր աշխատութեան

¹⁾ Ողջ աշխատութիւնը բաղկացած է վեց գլուխներից և 120 կրկններից:

պս գրուիւր.

«Թէպէտ խալիփաները հայերի հետ միշտ հաշտ էին (մթթէլ), սակաւն առաւել ևս նոցա վտանգաւոր էին զանազան իշխանները և կողմնապահները (ոչք են սոքա, հայեր թէ արաբներ), որոնք գրեթէ կատարեալ անկախութեան էին հասել, Մասամբ նոցա որդալթները, մասամբ ևս անմիաբան և ապստամբ հալ նախարարների մտաւնքը արաբացիներին առիթ տւին Հալաստանը աւերելու (պատեղից երևում է, որ պ. Տ. Մ. վերոյիշեալ «իշխաններին» և «կողմնապահներին» արաբացիներ է համարում), Մինչև այսօր զիտէ հայոց ժողովուրդը պս բռնակալներից մի անգութի անունը, Բուզալինը, որի սոսկալի, բայց (!) անեղ գործերը չափտեան հալ ժողովրդի պատմութեան մէջ կը մնան»:

Այս բոլորը ճիշտ չէ: Հեղինակը պատեղ հետեւել է, սակաւն առանց ուշադրութեան, St. Martin, Mémoires sur l'Arménie աշխատութեան, «զանազան իշխաններ և կողմնապահներ» (կուսակալներ? ծան. Խմբ.) արաբներ է համարում, որոնց կար զին ըստ պ. Տ. Մ. պատկանում է նաև Բուզան. սակաւն նոքա ոչ թէ արաբներ, այլ հայեր էին, Իրակասութիւնն ալն է, որ IX դարու առաջին կիսում հալ նախարարները գրեթէ անկախ զիրք ունէին, ինչպէս Սէն-Մարտէնը, որին պ. Տ. Մ. պատեղ չէ լիշում, ևս ասում է: Մուսավակիլ խալիփան (847—861), որը ըստ պ. Տ. Մ. հայոց հետ («հաշտ») պէտք է եղած լինի, ցանկանալով

իւր իշխանութիւնը Հալաստանում վերահաստատել, վերջապէս ստիպւած է լինում Բուզալ Անդրանիկին մեծ զորքով Հալաստան զրկել, երկիրը նաւաճելու և բոլոր նախարարներին գերելու համար, որ և կատարւում է (852—855): Նկատենք որ այս բոլորը եկեղեցական պատմութիւն չէ, բայց անցնենք:

Սորանից լետոյ անմիջապէս հեղինակը շարունակում է՝—«Սոն ժամանակ բարձրացաւ հիւսիս արևմտեան Հալաստանի աւերակների վերալ, հռչակաւոր Անի քաղաքում, Բագրատունեաց իշխանութիւնը, մեծ իշխան Աշոտի օրով: Դարձեալ երկու սխալներ. ա) Բագրատունեաց իշխանութիւնը առաջ եկաւ ոչ թէ 852—855, այլ դորանից լետոյ, բ) առաջին Բագրատունեաց մալրաքաղաքը ոչ թէ Անին է եղած, այլ Բագաւաւնը, Սրազաւարսը:

Հեղինակը շարունակում է անմիջապէս. «Սրբ պատրիարք Փոսք ալս լսեց, զրկեց նրան (Աշոտին) մի նամակ և դորանում նրան խորհուրդ տւեց, քրիստոնեալ կապեր հետ բարեկամութիւն հաստատել, որի ժամանակ նա նորան մի կտորիկ Քրիստոսի սուրբ խաչից ընծալեց: Աշոտը խոտաացաւ այս կատարելու Փոսք գրել է նաև մի նամակ երկու բնութեանց և Քաղկեդոնի ժողովի վերալ կաթողիկոս Զաքարիային, որին Բիւզանդիակից հալածւած հայոց եպիսկոպոս (!) Սահակ Մուսթ կամ Ապիկուրէշը պատասխանեց»: Սորանից լետոյ պ. հեղինակը պատմում է Աշոտ I Թագնակալութիւնը: Սակաւն

ինչու, թնչ նպատակով է նա գրել այս խօսքերը, միթէ արն հանգամանքը, թէ փոտը Աշոտին 'և Զաքարիային նամակներ գրեց, պ. Տ. Միքեղեանի նամար մեծ գիտնական գրեալ է, մինչդեռ այդ հանգամանքը գիտնն նաև մեր թեմական դպրոցների աշակերտները, բայց մեզ նետաքրքիր էր իմանալ արն գրած նամակների բովանդակութիւնը, մեզ նետաքրքիր էր պատեղ լնել Շիրակաւանի ժողովի պատմութիւնը, որը, ըստ երևութին, պ. Տէր-Միքեղեանին բոլորին անմանօթ է, Մի անձն, որ նպատակ ունի հալ և լոյն եկեղեցիների մէջ տեղի ունեցած ընդհարումները գրել, միթէ կարող է զանց առնել Շիրակաւանի ժողովի պատմութիւնը, թող կարգար պ. Տէր-Միքեղեանը հար Զամէանի հալոց պատմութիւնը, որին նա տգէտ է համարում, արն ժամանակ նա արնտեսակ խալտառակ գիտներտացիա չէր գրիլ. նորտն անձանօթ է նաև կարդիւալ Հէրզէրիսօթէրի լալտնի աշխատասիրութիւնը. Photius, Patriarch von Konstantinopol. Bd I, էջ 478—504: die ersten Missionsbestrebungen des Photius: Շիրակաւանի ժողովը, որ պ. Տ. Մ. ի աշխատութեան սիրտը պէտք է կաղմէր, զանց է առնում, իսկ մի խիստ վիճարանական երկար նամակ, որը թաշիկ կաթողիկոսի հրամանով մի լոյն մուկոսանդ միտրոպոլիտի գրած է, թարգմանում է գրեթէ ամբողջապէս, նորան ճւրտում է երեք ամբողջ կրկններ (էջ. 77—80): Ինչ է ուղում պ. Տէր-Միքեղեանը այս նամակով ասել,

միթէ մենք այս նամակը չէինք կարող Ասողիկի մօտ կարգալ ¹⁾,

Պր. Տ. Մ. անմիջապէս շարունակում է. «887 թւին Աշոտը ստացաւ արարացիներից և Բարսեղ Մակեդոնացի կալսրից թագեր և նա հանդիսաւոր կերպով Անի քաղաքում թագաւոր օժեկցաւ»:

Երեք սխալ՝

ա) Բարսեղ Մակեդոնացի կալսրը վախճանւել է 886 թ.-ի մարտի 1-ին (տես Brosset, Collection d'historiens arméniens, II, 426), հետևապէս Աշոտը չէր կարող 887 ին նորանից թագ տանալ և պակեկել, Սորան ընդդէմ է նաև թովմալ Արծրունի ժամանակակից գիտուն պատմագիրը, (III, 258), Ստեփանոս Սրբէլեանը, Յովհաննէս կաթողիկոսը, որը պարզապէս ասում է, որ Աշոտը Բարսեղ կալսր կենդանութեան ժամանակ (ուրմն 886-ի մարտի մէկից առաջ) թագաւոր պակեկեց, Պրն. Տէր-Միքեղեանը, որը զանազան լոյն, լատին, հալ աղբիւրներ միմնանց վերալ է կուտակում, աւելորդ է համարիլ արտեղ աղբիւրները միմանց հետ համեմատելու, նոյն իսկ լիչեկու, թէ ըստ սր պատմարանի նա Աշոտի թագաւորութիւնը 887 թւականին է սահմանում:

բ) Մենք չգիտենք, թէ այդ ժամանակ Անի քաղաքը թնչ էր, չգի-

¹⁾ Նաև պ. հեղինակը բոլորովին տեղեկութիւն չունի արն նամակագրութեանց, որտեք լիտոլ տեղի ունեցան Աշոտ II-ի, Յովհաննէս II-ի և Կ. Պոլտի պատրիարք Նիկիլաոս Միստիկոսի, փոտի աշակերտի մէջ:

տենք ճան, թէ Աշոտը որ քաղաքում թաղաւոր պսակեց:

գ) Աշոտը պսակւել է և ոչ թէ օծւել, ինչպէս Սէն-Մարտէնը սխալմամբ Յովհաննէս կաթողիկոսի խօսքերը թարգմանում է, և որի թարգմանութեանը պ. Տ.-Միքելեան կուրորէն հետեւում է:

Սակալն ալս ևս եկեղեցական պատմութիւն չէր. շարունակենք:

Խաչիկ կաթողիկոսի նամակը առաջ բերելուց չետոյ որը վերս լիշեցինք, էջ 80 հետեւում են նորից սխալներ: Ալստեղ նա ցուց է տալիս իւր մեկնաբանական հանճարը: Մտաթէոս Ուռնալեցին պատմում է, թէ երբ Պետրոս կաթողիկոսը Կ. Պոլսում Կոստանդին Մոնումարսոս կալսերը այցելեց, կալսը առաջարկեց նրան մի ոսկեալ աթոռի վերալ նստելու: Այցելութեան ժամից չետոյ, երբ կաթողիկոսը ցանկանում էր հեռանալ, նորա հետերդը, ոմն Նղիշէ վարդապետ, վերցրեց ոսկեալ աթոռը և ուզում էր իւր հետ տանել: Կալսեր սենեկապետները դժգոհելով, փորձում էին ալս թանգազին աթոռը բախտակումից ազատել, սակալն Նղիշէ վարդապետը առարկեց թէ ալս աթոռը արդէն կաթողիկոսական գահ է դարձել, որովհետեւ կաթողիկոսը նորա վերալ մի անգամ նստել է, և թէ ալս ոք ալ ևս իրաւունք չունի նորա վրալ նստելու: Կալսը զիջանում է վերջապէս և արծաթասէր վարդապետին ուղղում հետեւալ խօսքերը. «Ալս աթոռը արժէ 1000 դահեկան, պահպանիր ուրեմն քո տիրոջ համար, որ ալ ոք բացի նրա-

նից սորա վերալ չնտի ¹⁾: Ալս «charakteristischer Bericht»-ի մէջ պ. Տէր-Միքելեանը տեսնում է ամի մեծ գաղափար, որ հայք ունէին իրանց եկեղեցու վեհութեան մասին»: Բայց սա միամտութիւն է կարծել՝ թէ ճշմարիտ որ Հայոց մօտ սովորութիւն է եղել, բոլոր ալս աթոռները, որոնց վրալ կաթողիկոսը նստում էր, վերցնել և պահպանել... Նիթէ այդ սովորութիւնը Հայոց մօտ խստիւ պահպանւած լինէր, ալսոր մենք կունենալինք Լջմիտածնում III, IV, V, VI... դարերից 1000-ուր աթոռներ, որոնք գեղարւեստական և ճարտարապետական գիտութեանց համար մեծ նշանակութիւն կունենային: Սակալն ալս պատմութիւնը ցուց է տալիս միալն Պետրոս կաթողիկոսի և իւր ուղեկցի արծաթսիրութիւնը, ինչպէս և մենք ալց հայոց պատմութիւնից գիտենք:

Վերջապէս վերջին երկում պ. Տէր-Միքելեանը պատմում է մի դէպք, որը պարզ հեղինակի սրտի դառնութիւնն է վկայում և ընթերցողի մօտ միալն կարեկցութիւն, բայց ոչ գիտական հետաքրքրութիւն է զարթեցնում: Ստեփանոս Օրբելեան գլ. 59, էջ 237, առաջ է բերում մի մուրհակ, որի մէջ ճեղատիրոս հայք Լևոն Մեծին, Հռովմի պապին իբրև կուսակից Քաղկեդոնի ժողովի (440—460) Յուդայի, ամենամեծ հրէշի, ամենասոսկալի պատկերի, որ Աւետարանը ճանաչում է, ապա Արիոսի, Մակեդոնի, Նեստորի և ալ հերև-

¹⁾ Տե՛ս E. Dulaurier, Bibliothéque hist. armen. Mathieu d'Edesse թ. 86.

տիկոսների դասն են կարգել, և արդէպքը, որ անպատշաճ և անտեղի էր պատեղ պատմել, պ. Տէր-Միքելեանը պատմում է առանց ամենաչնցաւակցութեան:

Ահաւասիկ արդ է պ. Տէր-Միքելեանի դիտերոտացիաի IV գլխի բովանդակութիւնը և միւս գլուխները ևս նոյն արժէքն ունին: Մարդ զարմանում և ապշում է հեղինակի հաճարձակութեան վրայ, չի հասկանում թէ հեղինակը ինչ է գտել ինչ նպատակով է սխալներով հալ մատենագիրը արտադրում: Եթէ պ. Տէր-Միքելեանը արդարձակումները անիրաւացի է գտնում, թող հրատարակ դուրս գալ և պարզ ասէ, թէ ինչ է գտել իւր տեսութեան շարժող սկզբնական պատմութեան ինչ ծառայութիւն է մատուցել Միթէաչն, որ նա ցոյց է տալիս, որ հաւք միաբնականներ են եղել (Monophysiten). սակաւն միթէաչ կանոն է ապացոյցի, միթէաչ նոյն իսկ կաթոլիկները, պրոտեստանտները և աւել նոյնը չեն ասում, միթէաչ նոյն իսկ մեր ամբողջ եկեղեցական պատմութիւնը նոյնը չի ասում:

Սակաւն պ. Տ.-Միքելեանը իւր ասելիքը թող արտաւազէ պարզ, ոչ աչնպէս, ինչպէս նա «Արարտում գրում է»¹⁾:

¹⁾ Պրն. Տէր Միքելեանի լեզուն (հալերէնը) մի ստակալի ժարգօն է. նա չգիտէ հաստատ աշխարհաբառի տարբերքն անգամ. օր. որ ենթական թուով պէտք է համաձայնի ստորոգեալի հետ Օրինակներ. «Եթէ կալ (կան) պարագաներ, որ կարէ (!)»... «Իսկ թէ որքան մեծ

II

Այս բոլորը վերաբերում էր ըստ մեծի մասին պրն. Տէր-Միքելեանի աշխատանքի գլխական արժէքին, հետաքրքիր է ծանօթանալ մասնաւորապէս նաև հեղինակի հոգու, գաղափարների և հակացքների հետ:

Նետտորը և Պուլսի Պատրիարքական դահր բարձրանալով, արդէս խոսեց Թէոդոսիոս II կալսեր հետ. «Տուր ինձ մի երկիր, որ հերիտիկոսներից զերծ լինէր, և ես քեզ դորա համար տալիս եմ երկիրք. օգնիր ինձ հերձաժողներին լաղթելու, և ես քեզ օգնում եմ պարսիկներին լաղթելու»²⁾: Ապա սկսեց իւր մտեւածող հալածանքը ընդդէմ Արիոսականների, Ապոլինարիանների և ալ հերիտիկոսների և հերձաժողների: Սակաւն շուտով բանից երևեց, որ ամենամեծ հերիտիկոսը հէնց ինքը Նեստորն է:

Այս երեւութը մենք նկատում ենք

տեղ պէտք է բռնեն (բռնէ) արդ հոգեշունչ հայրերի վսեմաթուիչ և ազդու գրածները ընթերցանութիւնն, արդ կղզալ...» «Մինչդեռ խոհականի համոզմունքը սեկուած է նորա մէջ անբաժան Միաչն աչն է համոզմունք, որի վերալ մտածել ենք. («ենք»), որովհետեւ պ. հեղինակը պատեղ դործի մէջն է. մտածել նոյն է թէ իւրացնել (?), իսկ աչն ամենն, որի վերալ չես մտածել և ունիս, թուժակաբար ունիս (հեղինակը ալ ևս չի ուզում ասել «չենք մտածել» «ունինք»), վախնում է թէ ինքն էլ «չմտածող» և «թուժակաբար ունեցող» երևալ !) և աչն:

²⁾ Տես Հէրզէնրեոթէր, եկեղեցական պատմութիւն I, 308:

լաճախ կեանքում զանազան անձնա-
 ւորութեանց մօտ: Ամենապարզ, ամենանամեստ կեանք քարոզողները,
 զէպլի բերմամբ հարստանալով,
 դառնում են ամենաչալլ անձեր,
 ազատութեան անունով երդողները,
 իշխանութիւն առնելով, դառնում են
 ամենամեծ բռնակալներ, լաճախ
 մենք լսում ենք ժլատին ժլատու-
 թիւնը, նախանձին նախանձը պա-
 խարակելիս... Նորն երևութիւն մենք
 նկատում ենք պ. Տէր-Միքէլեանի
 մօտ: Ով որ պ. Տէր-Միքէլեանի զիս-
 սերտացիան և նրա բազմաթիւ լօղ-
 ւածները «Արարատ»-ում կարդացել
 է, նա անշուշտ նկատած կը լինի եր-
 կու հոգեծաւալ (?) դադա-
 փարներ (Fixe Ideen), որոնք
 կարմիր թելի նման անցնում են
 նրա բոլոր մտաւոր կեանքի սրտի
 ու մտքի միջով: Գոքա են 1) ատե-
 լութիւն, բայց մարմնացեալ ատե-
 լութիւն, ալնպիսի ատելութիւն, որով
 Բապտիստիան Գովհաննու հեղինակը
 հեթանոս Հռոմէն ասում էր, նրան
 անառակ կնոջ հետ համեմատելով,
 ալլաբանելով դէպի հերիտիկոսները,
 որոնց մայրը և դպրակը պ. Տէր-Մի-
 քայլեանը համարում է Հռոմի ե-
 կեղեցին ¹⁾ և 2) ատելութիւն դէպի
 թերուսութիւնը: Պրն. Տէր-Միքէ-
 լեանի կարծիքով թերուսութիւնը
 մարդկութեան ամենամեծ չարիքն
 է, վատ և վատթար, քան արդարու-

թիւնը: Բայց այս երկու լատկու
 թիւնների կասկածանքից ևս պ. Տէր-
 Միքէլեանը ազատ չէ: Պրն. Տէր-
 Միքէլեանի նկարագրած Հալատ-
 տանեաց եկեղեցին ոչ այլ ինչ է,
 եթէ ոչ մի աղանդ, մի հերձուածք:
 Մենք խնդրում ենք ընթերցողին
 մեր ներքև ասելիքներին ուշադրու-
 թեամբ հետեւելու

Մեր եկեղեցին եղել է մինչև
 Քաղկեդոնի ժողովը կաթողիկէ (ընդ-
 հանրական) մայր եկեղեցու մի ճիւ-
 ղը: Սուրբ Գրիգոր Լուսաւորչին ե-
 ղել է մի կաթողիկ վարդապետ, որը
 մեր ազգային եկեղեցու հիմնադիրը
 դարձաւ Նա ընդունել և քարոզել է
 սուրբ Աւետարանի հետ միասին նաև
 կաթողիկ եկեղեցու ղողման և աւան-
 դութիւնը: Արտօր իսկ մենք դաւա-
 նում ենք Հաւատամքի մէջ մի, կա-
 թողիկէ (ընդհանրական), առաքելա-
 կան սուրբ եկեղեցի: Մեր եկեղեցու
 պետը ևս կոչում է կաթողիկոս
 (=ընդհանրական, scilicet ընդհան-
 րական եկեղեցու հովիւ, գլուխ): Իսկ
 երբ Քաղկեդոնի ժողովը 451 թ.ին
 նախկին երեք ժողովներին հակա-
 ռակ ելք ունեցաւ, ինչպէս այդ ար-
 դէն հաստատ ֆակտ է, միւր եկե-
 ղեցին մնաց հաստատ և հաւա-
 տարիւմ նախկին եկեղեցու աւանդու-
 թեանցը և դաւանանքին:

Այլ է պրն. Տէր-Միքէլեանի կար-
 ծիքը: Ըստ նորա Հայրց Եկեղեցին
 սկզբից սկսեալ ընդհանրական եկե-
 ղեցու հետ ոչ միայն ոչ մի լարարե-
 րութիւն չէ ունեցել, այլ և նրան
 թշնամանել է, դէպի նա թշնամա-
 կան դիրք է բռնել, ամեն բան, լի-

¹⁾ Տես «Արարատ» մագլիս, էջ
 393, ուր հեղինակը մի մոլիտանդի
 խօսքերը մէջ բերելով, բացական-
 չում է. «Ուրեմն աշխարհի ամենա-
 մեծ աղանդը Հռոմիւն է»:

ներ ալդ ուղիդ կամ սուտ, մերժել է միանգամայն: Ըստ նորա Հայոց համար մի «ի մտող չարարեութիւն Հռովմի հետ անպարման վտանգաւոր է եղել» (էջ 9): «Գրիգոր Լուսաւորիչ համամտում է ոչ երբէք չունահան, այլ ասորական բարեպաշտութեան հետ, որի կողմից ոչ մի վտանգ չէր կարելի սպասել» (էջ 11): Ի՞նչ վտանգ, պ. Տէր-Միքէլեան: «Հայք մամակցում են Նիկիական ժողովին միմիա չն ի սէր իրանց դաշնակցութեան (կոստանդին կալսեր հետ):» «ասկայն Գրիգորի համար (Նիկիական ժողովն) ուրիշ ոչ մի նշանակութիւն չունէր, նրա համար պարզ էր, որ նա զորանով ցանկանում էր միայն կոստանդնիսն մի հաճոյանք պատճառել» (եր. 21): Միթէ հալերը կարող էին աղչափ անտարբեր դնուել դէպի Արիոսի աղանդը, որ Քրիստոսի աստածութիւնը ուրանում էր, չէ որ մեր Նիկեացիները նշում է Արիոսին և ընդունում Նիկիական ժողովը: Միթէ մեր եկեղեցին կարող էր մի վարդապետութիւն նշումել միմիայն ի սէր մի կալսեր?

էջ 29. «Այս բոլոր պատմութիւններին պարզ երևում է, որ հայք միայն Նիկիոյ (ժողովի) կանոնները ընդունել են, ճիշտ աչնպէս, ինչպէս միւս բաղմաթիւ ժողովներին կանոնները»: Ո՞ր (միւս բաղմաթիւ) ժողովների կանոնները, պ. Տէր-Միքէլեան, թերևս նաև Քաղկեդոնի ժողովինը Յետոյ անմիջապէս շարունակում է. «ըստ պատմական աւանդութեանց պէտք է Գրիգորը 325

(Թւին) (90 տարեկան) ¹⁾ ոչ ոքի ալ ևս երեկցած չլինի և եթէ մենք նրա երկերը ուշադրութեան ենք սանում, նա Նիկիական ժողովը դեռ ևս չի ճանաչում, բացի սուրբ Գրիգորի հեղինակութիւնից:

Մենք պ. Տէր-Միքէլեանի հետ ոչ մի կէտում չենք կարող համաձայնուել: Մեր եկեղեցական պատմութիւնը և աւանդութիւնը մեզ պարզ ասում են, որ սուրբ Գրիգորը ճանաչել է ոչ միայն սուրբ Գիրք, այլ և ընդհանրական եկեղեցու հեղինակութիւնը: A priori իսկ անկարելի է համաձայնել պ. Տէր-Միքէլեանի հետ, որ III—IV դարու կաթոլիկական մի վարդապետ աչնպէս աւանց եկեղեցական ղոգմալի լինէր: Մի եկեղեցի, որ աչնպիսի մոլեռանդութիւն և ատելութիւն ցուց տալ դէպի կաթոլիկ (ընդհանրական) եկեղեցին, նա կը մեռնէր, կ'անհետանար եկեղեցական պատմութեան ասպարէզից, նա ներքին մտաւոր կեանք չէր կարող ունենալ: Պ. Տէր-Միքէլեանի կարծիքով Հայք 12-րդ դարում միայն առաջին անգամ երեք առաջին ժողովների (Նիկիոյ, Կ. Պոլսի և Նիխտոսի) ընդհանրականութիւնը ընդունեցին (էջ 39-40): Ինչից է ալդ երևում սա կայն: Հայերը, Քաղկեդոնի ժողովից սկսած, երբ հարկ էր լինում Բիւզանդացիների և Հռովմաեցիների դէմ պաշտպանուել՝ միշտ գիտում էին վե-

¹⁾ Աչնպէս ապշելով բացականչում է հեղինակը իւր անհիմն կարծիքի վրայ, ըստ որով սուրբ Գրիգոր Լուսաւորիչն 235 թւին պէտք է ծնւած լինի:

բուհչեալ երեք ժողովների վարդապետութեանս—Պրն. Տէր-Միքէլեանի կարծիքով «նախնի Հայք»—die alten Armenier—համարում են եղել միմիայն երկու խորհուրդներ, — մկրտութիւնը և հաղորդութիւնը—իրբն «փրկարար խորհուրդներ—Heils—Mysterien (եր. 116), մի կարծիք, որը պ. Տէր-Միքէլեանը արտաւայտում է առանց ապացուցանելու, հետևելով պրոտեստանտներին, որոնք պնդում են, թէ Լօթը խորհուրդներից հինգը երկոտասաներորդ դարում են առաջ եկել:

Մենք չենք կարող հասկանալ նաև աչն սոփեստութիւնները, որոնցով պարոնը տքնում է ցոյց առլ, որ ոչ մի կաթողիկոս քաղկեդոնական չէ եղել ի միջի ալոց նա հերքում է Ներսէս Երնողի քաղկեդոնութիւնը (եր. 71): Մենք առաջ ենք բերում ականատես պատմագիր Սեբէոսի վկայութիւնը այս կէտի մասին և թող ընթերցողը դատէ, արդեօք Ներսէս Երնողը քաղկեդոնական էր, թէ ոչ: Սեբէոս, Կ. Պոլիս, ա. տիպ. եր. 220—121. «Անանկեալ (Ներսէս Երնող) ի մանկութեան չախարհին Յունաց և ուսեալ զլեզուս և զպարութիւն Հռոմին և շրջեալ ընդ աշխարհս զաւրու կարգաք զինուորութեան և հատատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոն Քաղկեդոնի, և ի վերայ տումարին Լեոնի, և ոչ ումէք ի վեր հանէր զխորհուրդս ամբարշտութեան, մինչև եհաս չեպիսկոպոսութիւն աշխարհին (Հայոց) և անտի կոչեցաւ չաթոս:

կաթողիկոսութեան: Աւ էր ալր առաքինի վարուք պահաւք և աղօթիւք, բաց ի սրտի իւր ծածկեալ ունէր զբոնս դառնութեան և խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոն, բաց ի վեր հանել զբանն ոչ համարձակէր: Աւ ապա պատմելով կաթողիկոսի քաղկեդոնութիւն ընդունելն և չունական ծխով հարգելն, նկարագրում է նրա մատնութիւնը և բունակալութիւնը հետևեալ սրտամտիկ խօսքերով. «Աւ ալսպէս շարժեաց կաթողիկոսն զճմարիտ հաւատս սրբոն Գրիգորի, զի կալեալ էր ամնայն կաթողիկոսացն հատատուն հիմնադրութեամբ ՚ի սրբոյ չեկեղեցոջն ՚ի սրբոն Գրիգորէ մինչև ցալսոր: Աւ դսուրք և զվճիա և զսկանակիտ աղբերացն պղտորեաց զՆուրս, զոր ի վաղնջունց իսկ ունէր ի միտս իւր կաթողիկոսն, և ոչ ի յսեաց չալտ: Նև մինչև ցալն աւր և ապա զլուեալ ժամանակ կատարեաց զկամս իւր, մասնէր զմի-մի չեպիսկոպոսացն և բեկանէր ահիւս»:

Միայն պ. Տէր-Միքէլեանի նման շովինիստը կը ջանալ ապալիսի մատնիչին ուրանալու և ինչո՞ւ այս ջանքը, միթէ մեր եկեղեցու վրայ սուեր կարող է ընկնել, որ այս կամ այն կաթողիկոսը քաղկեդոնական է եղել:

Այս է պ. Տէր Միքէլեանի դիտարտացիան, որով նա ուղում է եւրոպայիներին իւր մաւրենի եկեղեցու պատմութեան հետ ծանօթացնել...